ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Ուսանողի կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման վերլուծության

Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման և վերլուծության հիմնական նպատակն է Քոլեջի կադրային պոտենցիալի որակի ուսումնասիրումը, գնահատումը, հետագա զարգացումը և կատարելագործումը:

Ուսանողների հետ անցկացվեց հերթական հարցումն իրենց ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Մեկից հինգ գնահատման բալային համակարգով նրանք գնահատեցին գործունեությունն ընդհանուր առմամբ, տրամադրվող նյութերի հասանելիությունը, դասը մատուցելու պատշաճ ոճը, մասնագիտական խորքային գիտելիքները, դասաժամի ճիշտ պլանավորումը, ուսանողներին ներգրավվելու կարողությունը, գնահատման օբյեկտիվությունը և գնահատականի հիմնավորումը, ուսանողների հետ կապված իրավիճակներին մոտեցումները:

Ուսանողները նշում են, որ դասախոսները կարողանում են առաջացնել և պահպանել լսարանային հետաքրքրություն, խթանում են ուսանողների ակտիվությունը և ստեղծագործական մտածողությունը, լրացուցիչ հանձնարարություններով շահագրգռում են ուսանողներին, դասը բովանդակալից է անցնում, ուսուցման ժամանակակից և ոչ ստանդարտ մեթոդներ են կիրառում: Դասախոսները ուսանողների նկատմամբ բարեհաճ, հարգալից և բարեկիրթ վերաբերմունք են ցուցաբերում, տիրապետում են ուսանողների հետ հաղորդակցության, լսարանում հաճելի աշխատանքային միջավայրի ստեղծմանը և պահպանմանը:

Գնահատման ակադեմիական ազնվության վերաբերյալ որոշ ուսանողներ իրենց դժգոհությունն են արտահայտել, մասնավորապես նշելով, որ գերազանց և բավարար առաջադիմություն ունեցող ուսանողներին գնահատել են բարձր՝ չհիմնավորելով կամ փորձելով չնեղացնել ոչ ոքի:

Դժգոհություններ կար նաև որոշ դասախոսներից, որ ունեն մասնագիտական խորքային գիտելիքներ, սակայն, չեն կարողանում ճիշտ կազմակերպել դասապրոցեսը:

Հիմնական դժգոհությունները վերաբերվում են նաև դասախոսների, ովքեր դասապրոցեսի ընթացքում հեռախոսները հավաքում են ուսանողներից, ինչն էլ առաջացրել է ուսանողների դժգոհությունը: